

## ԼԱՎԱԳՈՒՅՆ

ԳՅՈՒՂԽՈՐՈՒՐԴՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁ-  
ՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
ԿՈՆԿՈՒՐՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԵՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈ-  
ՎՐԻԱԿԱՆ ԿՈՄԻՍՍՐԻԱՏԻ

---

30.04.2013

352

L-24

**ՎՈՐՈՇՈՒՄ**

(ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1934 թ. ապրիլի 7-ի «1934 թ. գյուղխորհուրդների կոնկուրս-մրցում անցկացնելու» վորոշումը լրացնելու վերաբերյալ) .

ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշում է .—

1. ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1934 թ. ապրիլի 7-ի վորոշմամբ հայտարարված՝ գյուղխորհուրդների կոնկուրս-մրցումը (ԽՍՀՄ-ի Որ. ժող. 1934 թ. № 19, հոդ. 150) լրացնել գյուղխորհուրդների Ֆինանսական լավագույն աշխատանքի և գյուղխորհուրդների Ֆինանսական սեկցիաների աշխատանքի համամիութենական կոնկուրսով :

2. Առաջարկել դաշնակից հանրապետութիւնների կենտրոնական գործադիր կոմիտեներին այդ կոնկուրսը անցկացնել (1934 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներում հետևյալ ցուցանիշներով՝

ա) լավագույն աշխատանք գյուղխորհուրդների բյուջեն կազմելու և կատարելու, Ֆինանսական պլանը իրագործելու և բյուջետային խիստ կարգապահ հույսեր խորացնելու գործում :

բ) Գյուղհարկի յենթակա որբեկտների ժամանակին և լրիվ հաշվառում, բոլոր վճարումների առաջադրանքների որինակելի կատարում, յերկրորդ հնգամ-

3274 1007 30267



յակի փոխառութեան (Ք-րդ տարվա փոխառութեան) իրացում և բաժանորդագրված գումարների դանձում, բոլոր կուլակային տնտեսութեանների հայտնաբերում, աշխատավոր մենատնտեսներին կուլակների համար սահմանված կարգով և չափերով չհարկելը, գյուղական վճարումների դժով տրվող արտոնութեանների ճիշտ կերպում, կուլտուրական խնայողամարկղի կազմակերպում:

դ) Ֆինանսական սեկցիաների աշխատանքների ճիշտ կազմակերպում:

3. ԽՍՀՄ-ի կենտրոնական Գործադիր կոմիտեյին կից կոնկուրսի հանձնաժողովի մեջ մտցնել ԽՍՀՄ-ի Ֆինանսների Ժողովրդական կոմիսարիատի ներկայացուցչին, իսկ դաշնակից և ինքնավար հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին և յերկրային մարզային և շրջանային գործադիր կոմիտեներին և քաղխորհուրդներին կից կոնկուրսի հանձնաժողովների կազմի մեջ մտցնել համապատասխան ֆինամարմինների ներկայացուցիչներին:

ԽՍՀՄ-ի կենտրոնական կոմիտեի նախագահ՝ ԿԱ. Ի. Ի. Ի.  
ԽՍՀՄ-ի կենտրոնական կոմիտեի քարտուղար՝ [REDACTED]  
Մոսկովա-Կրեմլ  
1934 թ. մայիսի 7-ին.

## ՎՈՐՈՇՈՒՄ

### ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

1934 թ. հուլիսի 3-ին

Ֆինանսական լավագույն աշխատանք կատարող գյուղական խորհուրդների՝ համամիութենական կոնկուրս կազմակերպելու մասին.

ԽՍՀՄ կենտրոնական կոմիտեի նախագահության ս. թ. մայիսի 17-ի և Անդրկենտրոնական կոմիտեի նախագահության ս. թ. հունիսի 17-ի վորոշումների կապակցությամբ, ՀՍԽՀ կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահությունը վորոշում է.

1. Խորհուրդների համամիութենական կոնկուրս-մրցումներին միացնել Ֆինանսական լավագույն աշխատանք կատարող գյուղական խորհուրդների և Ֆինանսական սեկցիաների մրցությունը այն ցուցանիշներով և ժամկետում, վոր սահմանված է ԽՍՀՄ կենտրոնական կոմիտեի նախագահության 1931 թվի մայիսի 17-ի «Խորհուրդների 1934 թ. կոնկուրս-մրցումներ կազմակերպելու մասին պարբերի 7-ի վորոշումը լրացնելու մասին» վորոշման մեջ:

2. Կենտրոնական կոմիտեի կոնկուրսի աշխատանքները ղեկավարող հանրապետական հանձնաժողովի կազմի մեջ Ֆինանսական կոմիտեի ներկայացուցիչ հաստատել ընկ. Շմալոնյանին:

3. Առաջարկել քաղխորհուրդներին և շրջագործկոմիտեներին Ֆինանսների ներկայացուցիչներին մտցնել խորհուրդների կոնկուրսի աշխատանքները ղեկավարելու:

րող քաղաքային և շրջանային հանձնաժողովների կազմի մեջ:

4. Հանձնարարել կենտրոնի կազմաթնին և Ֆինստոկոմատին մշակել Ֆինանսական լավագույն աշխատանք կատարող գյուղխորհուրդների և Ֆինսեկցիաների կոնկուրսի ցուցանիշները և ներկայացնել հանրապետական հանձնաժողովի հաստատության:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի  
նախագահ՝ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի  
քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

### ՎՈՐՈՇՈՒՄ

#### ԽՍՀՄ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

Ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհուրդների և ֆինսեկցիաների կոնկուրսի մեջ գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովներին ներգրավելու մասին.

ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշում է՝

1. Ներգրավել Ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհուրդների և Ֆինանսական սեկցիաների կոնկուրս-մրցման մեջ, վորը հայտարարված է ԽՍՀՄ-ի Կենտրոնի 1934 թ. մայիսի 17-ի վորոշմամբ, գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովներին:

2. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների կոնկուրս-մրցումը անցկացնել հետևյալ ցուցանիշներով՝

ա) վերստուգիչ հանձնաժողովների կազմի ամբացում:

բ) յուրաքանչյուր ամիս դրամարկի պարտադիր ստուգում և գյուղխորհուրդի Ֆինանսական ամբողջ գործունեությունը յեռամսյա ստուգում:

գ) հաշվետվություն բնակչությանը՝ գյուղխորհուրդի Ֆինանսական գործունեության ստուգման արդյունքների և գյուղական բյուջեյի կատարման մասին:

ԽՍՀՄ-ի Կենտրոնի կոմիտեի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ-ի Կենտրոնի քարտուղարի պ. կ.

Մոսկվա—կրեմլ

Ա. ՄԵԴՎԵԴԵՎ

1934 թ. հունիսի 7-ին:

### ՎՈՐՈՇՈՒՄ

#### ԽՍՀՄ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

#### ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ

1934 թ. հուլիսի 3-ին

Գյուղական խորհուրդների վերստուգիչ հանձնաժողովներին ֆինանսական լավագույն աշխատանք կատարող գյուղխորհուրդի և ֆինսեկցիայի համամիութենական կոնկուրսի մեջ ներգրավելու մասին:

ԽՍՀՄ Կենտրոնի կոմիտեի նախագահության 1934 թ. հունիսի 7-ի և Անդրկենտրոնի 1934 թ. հունիսի 26-ի «գյուղական խորհուրդների վերստուգիչ հանձնաժողովներին՝ Ֆինանսական լավագույն աշխատանք կատարող գյուղխորհուրդի և ֆինսեկցիայի համա-

միութենական կոնկուրսի մեջ ներգրավելու մասին»  
ժողովումների կապակցութեամբ, ՀՍԽՀ Կենտրոն-  
կոմի նախագահութեանը վորոշում է՝

1. Առաջարկել շրջանային գործադիր կոմիտեներին և Ֆինտոդկոմատին կազմակերպել գյուղական խորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների կոն-  
կուրս հետևյալ ցուցանիշներով:

ա) Վերստուգիչ հանձնաժողովների կազմի ամբա-  
պնդումը.

բ) Դրամարկղի ամսեկան պարտադիր ստուգում-  
ներ և գյուղական խորհուրդների Ֆինանսական գոր-  
ծունեյության յեռամսյակային վերստուգումներ.

գ) Գյուղական խորհուրդների Ֆինանսական գոր-  
ծունեյության արդյունքների և գյուղական բյուջեյի  
կատարման մասին կանոնավոր հաշվետվութեան ազ-  
գարնակչութեան առաջ:

2. Առաջարկել Կենտրոնկոմի կազմաժամին այս  
ժողովումը կիրառելու մասին տեղերին հղել համա-  
պատասխան հրահանգ:

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի  
Ուսխագահ՝ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի  
Բարաուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

## ՖԻՆԱՐՄԻՆՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԴԱՌՆԱՆ ԿՈՆԿՈՒՐՍԻ ԻՍԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՄՈՒՉՆԵՐ

Կարևոր խնդիրն է նախ և առաջ թույլ չտալ վոր-  
պետի մի շարք Ֆինամարմիններ թերազնահատեն կոն-  
կուրսի նշանակութեանը և առանձին դեպքերում կոն-  
կուրս, գործնականորեն խիստ կարևոր և քաղաքակա-  
նապես շատ պատասխանատու աշխատանքը փոխարի-  
նեն գրադրութեամբ: Կոնկուրսի նշանակութեանը,  
առանձնապես խոշորանում է գյուղխորհուրդների  
Ֆինանսական աշխատանքի այժմյան անբավարար  
կազմակերպութեան կապակցութեամբ: Վերջին յեռամ-  
սյակում գյուղխորհուրդի Ֆինանսական աշխատանքը  
թուլացել և հետ է մղվել ու այդ հանգամանքը բացա-  
ռաբար է ազդել գյուղի Ֆինանսական պլանի կատար-  
ման վրա, ինչպես յակամուտների, նույնպես և ծախ-  
սերի վերաբերմամբ:

Կոնկուրսն այն գործիքն է, վորի ոգնութեամբ  
Ֆինանսական աշխատանքը գյուղխորհուրդում պետք է  
գրավի իր նշանակութեանն արժանի տեղը:

Կոնկուրս-մրցումը, մի կողմից պետք է գյուղ-  
խորհուրդները կազմակերպչորեն ամրացնելու ձևը  
դառնա նրանց առաջադրված Ֆինանսական խնդիրների  
կատարման ուղղութեամբ (միջոցների մոբիլիզացիայի  
պլանի կատարումը, բյուջեյի կատարումն ու բյուջե-  
տային կարգապահութեան ամրացումը, խնայեղամ-  
արկղների աշխատանքի բարելավում, գյուղի աշնան  
վճարումները ձիշտ անցկացնելը և այլն), իսկ մյուս  
կողմից, կոնկուրսը պետք է դառնա գյուղի աշխատա-  
ղծութեան մեջ տարվելիք մասսայական, տեղիացիոն

և պրոպագանդիստական աշխատանքի այն ձևը, վորքի միջոցով մենք կարող ենք իրագործել մեր Ֆինանսական ծրագիրը:

Այս յերկու խնդիրները պետք է սերտորեն կապակցված լինեն մեկը մյուսի հետ վորպեսզի կոնկուրսի մասսայական աշխատանքը կտրված չլինի ողբերատիվ աշխատանքից, այլ ընդհակառակն, ամբողջովին ծառայի գյուղխորհուրդների ֆինանսական աշխատանքը կազմակերպչորեն ամրացնելու գործին:

Վորպեսզի այս բոլորը լուծված լինեն, կոնկուրսի աշխատանքը պետք է կազմակերպել լավագույն ձևով:

Կոնկուրսի կազմակերպիչները առաջին հերթին շրջանային ֆինանսական բաժիններն են: Ձևավորված են երեքի առաջնակարգ խնդիրը կոնկուրսի ժամանակ գյուղխորհուրդներին գործնական ոգնություն ցույց տալն է: Այդ ոգնությունը կկայանա նրանում, վոր տեղում գյուղխորհուրդներին ցույց կտրվի տեղական բյուջեն կազմելու կարգը, գյուղհարկին յենթակա սբյեկտները լրիվ ընդգրկելու գործնական ձևերը և այլն: Ամենամանրադնին և ուշադիր հրահանգում, ամենալարված կազմակերպչական աշխատանք— ահա թե ի՞նչ է պահանջվում յուրաքանչյուր շրջֆինբաժնից, նրա յուրաքանչյուր տեսչից, շրջխնայերամարկղից, ապահովագրական աշխատողից, վորպեսզի գյուղխորհուրդներին ցույց տրվելիք գործնական ոգնությունը լինի ուսալ: Անհրաժեշտ է կազմակերպել շրջանի և քաղաքի սոցիալիստական ոգնությունը գյուղին, ուղարկելով կոնկուրսի ժամանակ գյուղխորհուրդները ֆինբանկային սխտեմի ապարատից ֆի-

նանսավես դրագետ վորակյալ աշխատողներ, նույն գյուղխորհուրդների ֆինանսական տնտեսությունը կազմակերպելու համար:

Կոնկուրսի խակական գործնական աշխատանքը չփոխարինել տոնական ազմուկով՝ ահա սա յե, վոր պիտի լինի կոնկուրսի մասնակցող յուրաքանչյուր ֆինմարմնի և յուրաքանչյուր ֆինանսական աշխատողի նշանաբանը:

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԻՈՐՇՐԴԻ ԿԱՆԿՈՒՐՍԸ — ՖԻՆԱՆՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության վորոշմամբ հուլիսից մինչև հոկտեմբեր ամիսը պետք է անցկացվի ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհրդի ֆինանսական սեկցիայի և վերատուգիչ հանձնաժողովի կոնկուրս—մրցում: Կարևոր է հենց սկզբից գործն այնպես կազմակերպել, վորպեսզի ֆինանսական մարմինները չթերադնահատեն այդ կոնկուրսի նշանակությունը և աշխատեն, վոր կոնկուրսի շուրջը տարվող գործնական աշխատանքը չփոխարինվի թղթի, գրասենյակային իրարանցումով:

ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության հայտալարած կոնկուրս—մրցման հսկայական նշանակությունը վորոշվում է նախ և առաջ գյուղի ֆինանսական աշխատանքի այժմյան դրությամբ: Այդ աշխատանքը ներկայումս վատ է կազմակերպված ֆինանսական պլանի կատարման հոգսը վերջին տեղերից մեկն է գրավում, մինչդեռ ֆինանսական աշխատանքին գյուղ-

խորհրդի գործունեություն մեջ պատշաճ տեղ չտալով, Ֆինանսական աշխատանքը ձեռն չկազմակերպելով, մենք չենք կարող կատարել մեր Ֆինանսական ծրագրերը գյուղում յեկամուտների վերաբերմամբ, ինչպես նաև ապահովել գյուղխորհրդի միջոցների ճիշտ ուղտագործումը:

Կոնկուրսը հզոր միջոցներից մեկն է հանդիսանում գյուղի Ֆինանսական աշխատանքը բարելավելու գործում: Բոլոր Ֆինանսական աշխատողները, առաջին հերթին շրջանային Ֆինանսական բաժինները պարտավոր են ակտիվորեն լծվել կոնկուրսի անցկացման աշխատանքներին և դառնան նրա իսկական կազմակերպիչները:

Իսկ ի՞նչի վրա պետք է դարձնել գլխավոր ուշադրությունը կոնկուրսն անցկացնելու ժամանակ: Ի՞նչն պետք է գլխավորապես ձգտել: Պետք է աշխատել, վերապահել այն հսկայական մասսայական-քաղաքական, եղիտացրոն-պրոպագանդիստական աշխատանքը, վորը տարվելու յե բանվորների, կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ կոնկուրսի ժամանակ, անմիջականորեն կապակցված լինի գյուղխորհրդի փինանսական աշխատանքի կազմակերպչական ամրացման հետ: Ձինմաբժինները պարտավոր են կոնկուրսն այնպես կազմակերպել, վորպեսզի կազմակերպչորեն սպասնովված լինի բարձրորակ ամենորյա փինանսական աշխատանքը գյուղխորհրդում, փինանսական սեկցիայում, վերստուգիչ հանձնաժողովում: Բազմաթիվ վաստերը վկայում են այն մասին, վոր ուշադրություն դարձնելով (վոմանք շատ, մյուսները քիչ) մասսայական աշխատանքի դրվածքին, Ֆինանսական բաժին-

ները մինչև այժմ շատ քիչ բան են արել, իսկ շատ հաճախ դերթե վոչինչ չեն արել կոնկուրս-մրցումն կազմակերպելու և կոնկուրս-մրցման ընթացքում գյուղխորհուրդների Ֆինանսական աշխատանքը ամլացնելու համար:

Ի՞նչ պետք է անի այն գյուղխորհուրդը, վորն ուտում է հաղթանակող հանդիսանա կոնկուրսում: Շուրաքանչյուր Ֆինանսական աշխատող, յուրաքանչյուր Ֆինակտիվիստ պարտավոր է լավ հիշել և միշտ իր աչքերի առաջ ունենալ պահանջների այն զգալի ցանկը, վոր առաջադրվում է նման գյուղխորհրդին, այն է՝

1. Նախ և առաջ լրիվ, առանց վորեւե ապառքի, կատարել բնակչության միջոցների մորելիզացիայի պլանը.
2. Փաստորեն ապահովել բյուջետային կարգապահությունը.
3. Ժամանակին և լրիվ հաշվի առնել հարկման որյեկանները և ճիշտ հաշվել հարկն ու կոպարային սպահովագրությունը:
4. Կանոնավոր կերպով ու պահպանելով որենքի բոլոր պահանջները, կազմակերպել Ֆինանսական հաշվառումը և հաշվետվությունն, ինչպես և կազմակերպել դրամական գումարների ընդունման և պահպանություն գործը:
5. Հաստատուն սաշապան հանդիսանալ հեղափոխական որինականությունը Ֆինանսական աշխատանքները մեջ կերտելու ասպարիզում, մի աշխատանք, վորը պետք է ամբողջովին կատարվի հարվածայնությամբ և սոցմրցման մասսայական քաղաքա-

կան մեթոդներով, մասնակից անելով կորսնտեսական-  
էբերի և մենասնտեսների լայն մասսաները:

6. Կատարել գյուղխորհուրդներում ընդհանուր  
Ֆինանսական վերստուգումներ չլուծ պակաս քան  
յետամսյակը մեկ անգամ և բացի այդ, Ֆինանսական  
աշխատանքի ճյուղերի վերստուգումներ առնվազն ա-  
միսը մեկ անգամ:

7. Սխտեմատիկորեն ստուգել՝ թե ինչպես են  
կիրառվում կյանքում վերստուգումների և արդյունք-  
ների հիման վրա արված յեղրակացություններն ու  
առաջարկները:

Յուզանիչները շարքում, վորոնցով պետք է դնահատ  
վի Ֆինամարմինները և Ֆինաշխատողների կոնկուրսում  
ունեցած մասնակցությունը, առաջին տեղը դրավում  
են այնպիսիք, վորոնք ցույց կտան, թե ինչպես են  
Ֆինանսական մարմիններն ոգևույթ գյուղխորհուրդին,  
վերստուգիչ հանձնաժողովին Ֆինանսական աշխա-  
տանքը կազմակերպելու ասպարիզում. ի՞նչ են արել  
նրանք գյուղխորհուրդի Ֆինանսական սեկցիայի  
կազմն ամբացնելու, գյուղխորհուրդի հաշվետարների  
վորակավորումը բարձրացնելու համար, ի՞նչպես են  
նրանք սովորեցնում Ֆինակտիվին Ֆինանսական գործի  
տեխնիկային, ի՞նչպիսի դեր են խաղում կոնկուրսի  
անցկացման աշխատանքների մեջ շրջանային Ֆինան-  
սական բաժինների տեսուչները (Պետասի, բյուջեի  
մասսայական վճարումների տեսուչները) հատուկ տե-  
սուչները, խնայդամարկիչների աշխատակիցները:  
Ֆինամարմինների ոգևությունը գյուղխորհուրդին պետք է  
նախ և առաջ արտահայտվի նրանում, վոր տեղում  
կոնկրետորեն ցույց տրվի գյուղխորհուրդի աշխատա-

կիցներին, թե ի՞նչպես են հաշվի առնվում հարկման  
սրբիկտներն, ինչպես կազմել տեղական բյուջեն, ինչ-  
պես հաշվառման յենթարկել յեկամուտներն ու  
ծախսերը, ինչպես քննել բողոքները և այլն:

Ամենամարագնիս, ամենաուշադիր և վորակյալ  
եքահանգում ֆինանսական մարմինների և, առաջին  
եքերին, շրջանային ֆինանսական բաժինների, տե-  
սուչների, խնայդամարկիչների աշխատակիցների,  
ամենալարված կազմակերպչական աշխատանք— ախա  
թե ինչում պետք է նախ և առաջ կայանա կոնկուրսի  
ժամանակ գյուղխորհուրդներին ցույց տրվող պրակ-  
տիկ ոժանդակությունը: Հարկավոր է հրատարակել այն  
մտքից, վոր յուրաքանչյուր շրջանային աշխատող  
կարող է ամեն մի եարցում ոգնել գյուղխորհուրդին,  
դա բոլորովին ճիշտ չի: Սովորեցնել գյուղխորհուրդին,  
թե ի՞նչպես պետք է աշխատել կարող է և պարտավոր  
է շրջանային Ֆինանսական բաժնի յուրաքանչյուր ա-  
տանձին տեսուչն ըստ իր մասնագիտության:

Սրա հետ միասին պետք է կազմակերպել քաղաքի  
կողմից գյուղին ցույց տրվող սցիպիստական ոգևու-  
թյունը: Կոնկուրսի ընթացքում անեքաժեշտ է քաղա-  
քից յերկար ժամանակով գյուղ ուղարկել վոչ թե պա-  
տահական, այլ վորակյալ, իրենց գործին լավ տեղ-  
յտի, տեխնիկապես գրագետ ֆինանսական աշխատող-  
ների խոշոր խումբ:

Չգալի ոժանդակություն հաշվառման և հաշվե-  
տության կազմակերպման ասպարիզում պետք է գյուղ  
խորհուրդին ցույց տա ֆինանսական-բանկային աշխա-  
տողների պրոֆեսիոնալ միությունը, վորը հնարա-  
վորություն ունի ներգրավելու կոնկուրսի կազմա-

կերպման դործի մեջ միութեան այն անդամներին, վորոնք աշխատում են վոչ միայն Ֆինանսական այլ և ուրիշ կազմակերպութիւններում :

Յեթե մինչև այժմ կոնկուրսի կապակցութեամբ Ֆինանսական աշխատանքի բոլոր կողմերը լրիվ չափով չեն, ծավալվել, յեթե տենդենցներ են նկատվում հիմնական ուղղութիւններ վրա միմիայն հարկերի դանձման և փոխառութիւնները իրացման հետ կապված հարցերի վրա դարձնել, անտեսելով մի այնպիսի կարևոր բնադավառ, ինչպիսին դյուրխորհրդի բյուջետային տնտեսութեան կազմակերպումն է, ապա անհրաժեշտ է, վոր բյուջետային աշխատողներն անմիջապէս ամենակտիվ աշխատանք և մասնակցութիւն ցուցաբերեն կոնկուրսը կենտրոնում և տեղերում անցկացնելու համար :

Համամիութենական կոնկուրսն անց է կացում մի այնպիսի ժամանակ, յերբ դյուրի Ֆինանսական աշխատանքը և՛ հարկերի և՛ ապահովագրութեան և՛ բյուջեյի բնադավառում պետք է առանձնապէս լարված լինի :

Հուլիս-հոկտեմբեր ամիսները դյուրհարկի, ինքնահարկման, կոպարային ապահովագրութեան անցկացման, փոխառութեան վճարումների իրացման և վերջապէս, դյուրխորհրդի գալիք տարվա բյուջեն կազմելու ժամկետն է : կոնկուրսը պետք է դյուրխորհրդի Ֆինանսական աշխատանքներն կազմակերպչորեն ամրացնելու այն ձևը հանդիսանա, վորով ապահովելու յե Ֆինանսական ծրագրի կատարումը : Միաժամանակ կոնկուրսը կլինի այն չափանիշը, վորը ցույց կտա, թե վո՞րքան են բանվորները, կորտնտե-

3274  
1007  
30267

սականները, վորը հասարակայնութիւնը և վերջապէս Ֆինանսական աշխատողները հասկացել Ֆինանսական աշխատանքի ասպարիզում դյուրխորհրդի ունեցած դերը, վո՞րքանով նրանք ի վիճակի յեն լուծելու տվյալ ետապի հիմնական, խնդիրներն, այն է՝ կազմակերպել Ֆինանսական աշխատանքը դյուրում :

### ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԳՅՈՒՂԵՈՐՀՐԴՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՆԿՈՒՐՍՈՒՄ ՄՐՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՈՒ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ ՖԻՆԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ :

1. Գյուլխորհրդների, փինսեկցիաների և վերստուգիչ հանձնաժողովների կոնկուրս-մրցման մասնակցելը :

ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝ կոնկուրսին մասնակցող դյուրխորհուրդների, փինսեկցիաների և վերստուգիչ հանձնաժողովների թիվն ու տոկոսը. կոնկուրսի կապակցութեամբ անցկացված ձեռնարկումներ. հասարակական կազմակերպութիւնների և մամուլի մասնակցելու աստիճանը (չափը) :

2. Նվաճումները գյուլխորհրդների փինանսական աշխատանքներում և բնակչութեան միջոցների մորիլի-գացիայի պլանի կատարումը :

ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝ Բնակչութեան միջոցների մորիլի-գացիայի 3-րդ յեռամսյակի և հոկտեմբեր ամսվա պլանի ժամանակին և լրիվ կատարումը յուրաքանչյուր վճարման վերաբերմամբ : 4-րդ յեռամսյակի պլանի կատարման ապահովումը : Գյուլխորհուրդներից բանի՞ տոկոսն և կատարել միջոցների մորիլի-գացի-



ցիայի պլանը և ի՞նչպես են նրանք կատարել կոնկուր-  
սի մնացած ցուցանիշները :

3. Կոնկուրսի ցուցանիշների կատարման գործում  
փինմարմինների կողմից գյուղխորհուրդներին, ֆինանս-  
ցիաներին և վերստուգիչ հանձնաժողովներին ցույց  
տված ոգնությունը .

**ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ՝** Քանի՞ գյուղխորհուրդ են սպա-  
սարկել Փինմարմինները կոնկուրսի ժամանակ . Փին-  
մարմինները և խնայդրամարկղների աշխատակիցներից  
քանի՞սն են ուղարկված յեղել գյուղխորհուրդները  
Փինանսական աշխատանքը, հաշվեառումն ու հաշվե-  
տվությունը կանոնադրելու և գործնական  
ոգնություն ցույց տալու համար : Այդ անձանց  
գյուղխորհուրդում կատարած աշխատանքի վորակը :

4. Գյուղխորհուրդների ֆինանսական սեկցիանե-  
րի կազմի և աշխատանքի ամրացումը :

**ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ՝** Փինանսական սեկցիաների աշխա-  
տունակությունը, կոնկուրսի ցուցանիշներ կատարած  
Փինսեկցիաների թիվն ու տոկոսը, Փինմարմինների  
ձեռնարկումները Փինսեկցիաները ղեկավարելու ուղ-  
ղությամբ և ո՞ժանդակությունն ամենորյա աշխա-  
տանքների ընթացքում :

5. Գյուղխորհուրդների ամրացումը հաշվետարնե-  
րով :

**ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ՝** Գյուղխորհուրդների հաշվետարնե-  
րի պատրաստման և վերապատրաստման ընազավա-  
ռում ձեռնարկումներ անցկացնելը . գյուղխորհուրդնե-  
րից քանիսը և քանի տոկոս է ապահովված վորակ-  
յալ հաշվետարներով .

6. Աշխատանքը (ֆինանսական ակտիվի հետ գյու-  
ղում :

**ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ՝** Փինակտիվի հաշվառման դըր-  
վածքը . մասսայական-քաղաքական աշխատանքը Փին-  
ակտիվի հետ և Փինանսական գործի տեխնիկային սո-  
վորեցնելը . կին-ակտիվիստներին, կուլտուրեսուհիներ-  
ին, աշխատավորուհիներին և կուլտուրեսականներին  
գյուղխորհուրդները Փինանսական սեկցիաների մեջ ա-  
ռավելադույն չափով ներգրավելը :

7. Կոնկուրսի աշխատանքների կազմակերպումը :

**ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ՝** Կապը գործկոմին կից կոն-  
կուրսային հանձնաժողովի հետ . կապը շրջանային  
Փինանսական մարմինների հետ և նրանց աշխատանքի  
ղեկավարումը, իսկ շրջֆինրաժինների կողմից՝ գյուղ-  
խորհուրդների վերաբերմամբ կոնկուրսի ընթացքի և  
արդյունքների հաշվառումը . լավագույն գյուղխոր-  
հուրդների, Փինսեկցիաների և վերստուգիչ հանձնա-  
ժողովների հայտնաբերումն ու հաշվառումը, նրանց  
փորձի տարածումը . կոնկուրսին վերաբերող հարցե-  
րը մամուլում լուսարանելը, վերադաս մարմիններին  
կոնկուրսի աշխատանքների, ինչպես նաև այդ մար-  
մինների ցուցումները կատարման մասին ժամկետա-  
յին լրիվ ինֆորմացիա հաղորդելը :

8. Մասսայական վճարումների տեսուչների, ապա-  
հովազրական տեսուչների, բյուջեյի տեսուչների, հա-  
տուկ տեսուչների և խնայդրամարկղի աշխատակիցնե-  
րի մասնակցությունը գյուղխորհուրդների, Փինանսական  
սեկցիաների և վերստուգիչ հանձնաժողովների ֆինան-  
սական աշխատանքի կազմակերպման գործում :

9. Գյուղխորհուրդների, Փինսեկցիաների և վեր-  
ստուգիչ հանձնաժողովների աշխատանքների մեջ կոն-  
կուրս-մրցման շրջանում նկատված բացերը ժամանա-  
կին ուղղելը :

## ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԵՆՈՐՀՐԴԻ, ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՅԵՎ ՎԵՐՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍ-ՄՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԳՅՈՒՂԵՆՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՅԵՎ ՎԵՐՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ .

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՇԱՄԱՐ

1. Բնակչութեան միջոցների մոբիլիզացիայի պլանը լրիվ և որենքով սահմանված ժամկետներում կատարելը յուրաքանչյուր աղբյուրի վերաբերմամբ, նույն թվում և գյուղհարկի, կոպարային ապահովագրութեան, ինքնահարկման գծով, «Յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա փոխառութեան» բաժանորդագրման դրամը ժամանակին և լրիվ հավաքելը և խնայողական դրամարկղներն ավանդներն ներդրավելու պլանի կատարումը :

2. Կուլտուրքի, գյուղհարկի, ինքնահարկի և կոպարային ապահովագրութեան ապառքները լրիվ լուծարքման յենթարկելը— վճարման յուրաքանչյուր ժամկետը լրանալուց հետո, 2 որվա ընթացքում ապառքավորների ցուցակ կազմելը, տուժք ճիշտ հաշվելը և այլն :

3. Գյուղական բյուջեն ճիշտ կազմելն ու կատարելը և բյուջետային խիստ կարգապահութեան խորացնելը : Յեռամսյա դրամարկղային պլանները ժամանակին և ճիշտ կատարելը : Գյուղական բյուջեյի յեկամտային մասը ճիշտ կատարելը, ծախսերը բյուջեյով նախատեսնված գումարների սահմաններում կա-

տարելը, աշխատավարձը, մասնավորապես ուսուցիչներին և բուժաշխատողների աշխատավարձը ժամանակին վճարելը և նոր ուսումնական տարվա նախապատրաստման աշխատանքներին ժամանակին և լրիվ ֆինանսավորելը : Գյուղական բյուջեյի գումարները Պետքանիկ դրամարկղներում կամ խնայողական դրամարկղներում պահելը, բյուջեյի կատարման ապարիզում հաշվառման ու հաշվետվութեան դործը կանոնավոր կազմակերպելը : Գյուղական բյուջեյով պահպանվող հիմնարկութեանների կատարված ծախսերի որինական լինելու վրա հսկելը— ավանսներ ստացող հիմնարկութեաններից և անձերից ժամանակին հաշվետվութեան ստանալը այդ հաշվետվութեանների ստուգումը և ավանսային պարտքերի կուտակումներ չթուլատրելը :

Գյուղխորհրդի նախագահութեան ընդլայնացած յիստերում գյուղական բյուջեյի կատարման մասին յեռամսյակային հաշվետվութեաններ տալը՝ վերստուգել հանձնաժողովի հարակից ղեկուցմամբ, իսկ կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ժողովներում՝ ղեկուցումներ բյուջեյի կատարման մասին տալը :

1935 թ. գյուղական բյուջեն ժամանակին կազմելը, լրիվ հաշի առնելով և հայտնաբերելով բոլոր յեկամտային աղբյուրները :

4. Հարկման որյեկտները ժամանակին և լրիվ հաշի առնելը և գյուղհարկը, կոպարային ապահովագրութեանն ու ինքնահարկումը ճիշտ հաշվելը— կոլտնտեսութեանների, կոլտնտեսականների և մենատնտեսների բոլոր տեսակի և հասակի անասունների

ճիշտ և լրիվ հաշվի առնելն, անկախ այն բանից, թե դրանք յենթակա յեն հարկման կամ ապահովագրման, թե վոչ, բոլոր տնտեսությունները (նույն թվում հարկման որյեկտներ չունեցող և հաշվառման պահին ժամանակավորապես դուրս մնացած), ճիշտ և լրիվ հաշվի առնելը. ցանքերի ամբողջ տարածությունը, սահմանված պլանների համաձայն ճիշտ հաշվի առնելը, խոտհարքների, պտղատու և խաղողի այգիների լրիվ հաշվառումը, լրիվ և ճիշտ հաշվառումը բոլոր այն մենատնտեսների տնտեսությունների, վորոնք ունեն վոչ-գյուղատնտեսական յեկամուտներ և գյուղատնտեսական մթերքներ շուկայի դներով վաճառելուց ստացվող յեկամուտներ: Այդ յեկամուտների ճիշտ վորոշելը:

Գյուղհարկը, կոպարային ապահովությունը և ինքնահարկումը յուրաքանչյուր առանձին վճարողի համար ժամանակին և ճիշտ վորոշելը, որենքով սահմանված բոլոր արտոնություններն ու դեղջեր կանոնավոր կերպով տալը, վճարողներին ծանուցագրեր ժամանակին հանձնելը և անձնական հաշիվները լրացնելը: Կուլակային տնտեսությունների հայտնաբերումը և անհատական կարգով հարկելը: Աշխատավորների տնտեսությունները կուլակային տնտեսությունների համար նախատեսնված կարգով և չափերով հարկելու թույլ չտալը:

Գյուղական հարկային և ապահովագրական հանձնաժողովների ակտիվ աշխատանքը որյեկտներ հաշվի առնելու և վճարումներ վորոշելու բնագավառում: Որյեկտների հաշվի առնելու վճարումները ճիշտ վորոշելու և արտոնությունները լրիվ տալու աշխատանք-

քին գյուղական ակտիվին, և առաջին հերթին գյուղխորհրդների Ֆինանսական և գյուղատնտեսական սեկցիաների անդամներին և Ֆինանս-ակտիվիստներին մասնակից անելը:

Գյուղհարկի, ինքնահարկման և կոպարային ապահովագրության վերաբերյալ որենքները գյուղխորհրդների ընդլայնացած նիստերում ակտիվի մասնակցությամբ և կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ժողովներում մշակելը:

Բողոքների ժամանակին և ճիշտ լուծում տալը:

5. Կոպարային ապահովագրության աշխատանքին ճիշտ կազմակերպումը: Յուրաքանչյուր գյուղխորհրդին կից աշխատունակ գյուղական ապահովագրական հանձնաժողով կազմակերպելը, կոլտնտեսություններում աշխատունակ հասարակական ապահովագրական տեսուչ նշանակելն ու ահազանդող պոստեր կազմակերպելը:

Ժամանակին և ճիշտ ապահովագրական ակտեր կազմելն ու իսկական պատճառները հայտնաբերելը, դասակարգորեն—թշնամի տարրերի կողմից, ապահովագրական վարձատրություն ստանալիս. պետությանը խարելու դեպքերը վճռականորեն մերկացնել, միաժամանակ տարրերային աղետներից առաջացած իսկական վնասների հատուցումը ժամանակին ապահովելը: Կոլտնտեսությունների և մենատնտեսների տնտեսությունների ապահովագրված գույքի սիստեմատիկ ստուգումը և դեպի դույքը անտնտեսվար վերաբերմունք ունենալու դեպքերի մասին անմիջապես ընթացող համարն հայտնելը:

Կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտես-

տեսներին կյանքի կոլեկտիվ ապահովագրութեամբ և անասունները կամավոր ապահովագրութեամբ առավելագուցն չափով ընդգրկելը և վարձատրութեանը ժամանակին վճարելու վրա հսկելը: Ապահովագրական վճարումներից նախադուշակուն ձեռնարկումների (հրդեհային պաշտպանութուն, պայքար եպիդեմիայի դեմ) համար կատարվող մասհանումների կանոնավոր ծախսումը և այդ միջոցները այլ կարիքների համար ծախսելը չթույլատրելը:

Ապահովագրության դժուր ժամանակին և ճիշտ արտոնութուններ տալ և ժամանակին բողոքներ ու գիմումներ քննելը:

6. Որինակելի, կոլտնտեսական խնայողամարկղ կազմակերպելը: Խնայողամարկղը լավ շենքով և լավ աշխատակիցներով ապահովելը, շենքը մաքուր վիճակում պահպանելը, ավանդատուների և փոխառուների որինակելի սպասարկումը, վճարված փոխառության պարտատոմսերը ժամանակին բաժանելը, սխտեմատիկ ստուգումներ կատարելը և շահումներ հայտնաբերելը: Լավագուցն հարվածային կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից ու առաջավոր աշխատավոր մեծատնտեսներից խնայողամարկղի ավանդները ներգրավող լիազորներ նշանակելը, այդ լիազորներին ղեկավարելն ու նրանց աշխատանքը սխտեմատիկորեն ստուգելը:

Ամենորոյա մասսայական աշխատանքի և խնայողամարկղի որինակելի սպասարկման հիման վրա ավանդների ներգրավման պլանի և «Յերկրորդ հնդամայակի 2-րդ տարվա փոխառության վճարումների զանձման պլանի լրիվ կատարումը»:

Փոխառութեան վճարումների ճիշտ հաշվառումը և ժողովված գումարները ժամանակին խնայողամարկղներին հանձնելը: Գյուղխորհուրդներին և կոլտնտեսութուններին կից ոժանդակող հանձնաժողովների կազմի ամրացումը և նրանց աշխատանքները սխտեմատիկորեն ղեկավարելը:

7. Ֆինանսական հաշվառման և հաշվետվութեան արինակելի դրվածքը: Ֆինանսական հաշվառման, դյուղական բյուջեյի կատարման, գրամական գումարներ և դույքը ընդունելն և ծախսելը ձեվակերպելու վերաբերյալ գրքերն ու փաստաթղթերը կանոնավոր վարելը, վճարողների՝ դյուղհարկի, կուպարային ապահովագրության, ինքնահարկման, փոխառության և այլ դժուր ունեցած անձնական հաշիվների, հաշվարկման տեղեկագրերը և այլն կանոնավոր վարելը, գյուղխորհուրդի համար սահմանված ամբողջ հաշիվութունը շրջանային կազմակերպութուններին ճիշտ և ժամանակին ներկայացնելը:

8. Պետական և տեղական բյուջեների դրամական գումարներն ընդունելու, պահպանելու և Պետքանկին կամ խնայողամարկղին հանձնելու գործը միշտ կազմակերպելը: Յուրաքանչյուր վճարողին անպայման սահմանված ձևի անդորագիր տալը, և այն ճիշտ լրացնելը, անդորրագրային գրքույկների ճիշտ հաշվառումը, պահպանումն ու ծախսումը, դյուղական խորհուրդի դրամահավաք լիազորների մանրաղնին և խտիվ հաշվառումը, հրահանգումը, նրանց աշխատանքների ստուգումը և վոչ ուշ քան յերկու որ մեկ անդամ ժողովված դրամը նրանցից ստանալը:

Գյուղխորհրդի կողմից դանձված գրամական գումարները ճիշտ սահմանված ժամկետներում Պետրանկին կամ ինայդգրամարկդին լրիվ հանձնելը:

Գյուղխորհրդի կողմից դանձված գրամական գումարներն վատնման, հափշտակման կամ անկանոն ծախսման փաստերի բացակայութունը:

9. Ֆինանսական-հարկային և ապահովագրական աշխատանքների ասպարիզում հեղափոխական իխտաքինականութան պահպանելը: Կոլտնտեսութունները, կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին հարկման յենթարկելիս, որենքները ճիշտ կերպ տեղ և կոպարային ապահովագրութունն ու ինքնահարկումը ճիշտ հաշվելը և բոլոր արտոնութուններն ու զեղջերը ժամանակին և կանոնավոր տալը:

Կոլտնտեսականների վրա պարտք մնացած հարկերը, ապահովագրական և փոխառության վճարումները կոլտնտեսութուններից դանձել թույլ չտալը, կոլտնտեսութունների ընթացիկ հաշիվներից ապորինի կերպով գրամական գումարներ դուրս գրելը թույլ չտալը:

Վորեև ապորինի տեղական հարկեր և տուրքեր թույլ չտալը:

Խնայդգրամարկդներն ավանդներ ներդրավելու ասպարիզում լիակատար կամավորության սկզբունքն սնպայման կիրառելը և ավանդներն անարգել վճարելը:

Հարկերի և ապահովագրական վճարումների վերաբերյալ կոլտնտեսութունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների կողմից տրված բոլոր բողոքներին ու դիմումներին ժամանակին, ուշադրությամբ և ճիշտ լուծում տալը:

10. Ֆինանսական սեկցիայի և ֆինանսական ակտիվի աշխատանքների որինակելիի կազմակերպումը: Ֆինանսական սեկցիայի համար աշխատունակ կազմ ընտրելը, նրա աշխատանքները ղեկավարելն ու ստուգելը, ֆինանսական սեկցիայի մեջ կին ակտիվիստներ, աշխատավորուհիներ և կոլտնտեսուհիներ ներգրավելը:

Գյուղական բյուջեյի կազմելու և կատարելու աշխատանքներին ֆինսեկցիային մասնակից անելը. գյուղական բյուջեյով պահպանվող հիմնարկութուններին կատարած ծախսերի հետադրաման և ստուգման առթիվ ֆինսեկցիաներին կոնկրետ հանձնարարութուններ տալը. վոչ ուշ քան ամիսը մեկ անգամ գյուղխորհրդի ընդլայնած նիստերում ֆինսեկցիաների հաշվետվութունները լսելը:

Ֆինսեկցիան բնակչության միջոցներէ մորելիզացիայի պատճի գուարման համար վոչջ ֆինանսական ակտիվը միավորող և կազմակերպող մի կենտրոնի վերածելը:

Ֆինսեկցիայի անգամների և ֆինակտիվիստների մասին մշտապես հոգալը, նրանց հետ միասին միջոցներին մորելիզացիայի պլաններն, գյուղական բյուջեն, գյուղհարկի, ինքնահարկման և կոպարային ապահովագրության վերաբերյալ որենքներն ու հրահանգներն մշակելու միջոցով, նրանց վորակավորումը բարձրացնելը:

11. Մասսայական-քաղաքական աշխատանքը բունակչության միջոցների մորելիզացիայի և գյուղական բյուջեյի ասպարիզում: Սոցմրցումը գյուղխորհրդներին միջև ֆինպլանը լավագույն կերպով կատարելու համար և սոցմրցման կազմակերպումը կոլտնտեսութուն-

ների, կոլտնտեսային բրիգադաների, գյուղերի և առանձին հարվածային ֆինանսական աշխատողների միջև:

Պատի թերթերում, ՄՏԿ քաղաքափնններում և շրջանային թերթերում տեղական բյուջեյին, գյուղհարկին, կոպարային ապահովագրութան, ինքնահարկմանը, փոխառութան միջոցների գանձմանը և խնայդրամարկղների մեջ ավանդներ ներդրավելուն վերաբերող հարցերի լուսաբանելը:

Կոնկուրս-մրցման ցուցանիշները կոլտնտեսականներին և մենատնտեսների լայն ժողովներում մշակելը և գյուղի աշխատավոր մասսաներն այդ կոնկուրսի ցուցանիշների կատարման համար մոբիլիզացիայի յենթարկելը:

## 2. ԳՅՈՒ ՂԻՈՐՇՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՀԱՍԱՐ

1. Ֆինանսկցիայի աշխատանքի նիշտ կազմակերպումը: Աշխատանքի յեռամսյա և ամսեկան պլաններ կազմելն ու փորոշված ժամկետներում կատարելը, ֆինանսկախի հաշվառումը, սեկցիայի յուրաքանչյուր անդամի և ֆինանսկախի հաշվառումն ու ստուգումը:

2. Ամենուրյա գործնական մասնակցությունը բրեւակչության միջոցների մոբիլիզացիայի պլանի կատարման համար մղվող պայքարին: Կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտ. միջև ֆինանսական պարտավորություններ կատարելու վերաբերյալ լայն մասնաշաղկապ-քաղաքական աշխատանք անելը, կոլտնտեսասությունների, կոլտնտեսային բրիգադաների,

գյուղերի և առանձին ֆինանսկախի ստաների միջև ֆինանսկախի լավագույն կատարման համար սոցմրցում կազմակերպել, հարակից գյուղխորհուրդների սոցմրցման մասնակցելը ֆինանսկցիայի հետ. առաջավոր կոլտնտեսությունների բուքսիրային բրիգադաներ կազմակերպելը և հետ մնացող կոլտնտեսություններ ուղարկելը, առանձին աշխատանքներ կատարելու համար (գյուղհարկի, փոխառութան գծով և այլն) ֆինանսկախի ճիշտ բաշխում կատարելը:

3. Ֆինանսկցիայի ակտիվ մասնակցությունը գյուղական բյուջե կազմելու և կատարելու գործում. գյուղական բյուջեյի բոլոր յեկաճուտները ժամանակին և լրիվ մուծելու վրա հսկելը, դպրոցների, հիվանդանոցների և գյուղական բյուջեյով պահպանվող այլ հիմնարկությունների կատարած ծախսերի հաստիակական ստուգումը:

4. Ֆինանսկցիայի ակտիվ մասնակցությունը հարկման ոբյեկտների հաշվառման, վճարումներ հաշվելու ասպահովագրական վնասներ փորոշելու և դրանց իսկական պատճառները հայտնաբերելու, վճարողների բողոքները քննելու, ինչպես նաև փոխառությունների շահումները ստուգելու ասպարիզում:

5. Ֆինանսկցիայի կազմի ամրացումը լավագույն հարվածային կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների և առաջավոր աշխատավոր մենատնտեսների հաշիին և անաշխատունակների և մեղ անհարազատների մտարումը. սեկցիաների անդամների ճիշտ ոգտագործումը նրանց համար կոնկրետ առաջադրանքներ փորոշին ու այդ առաջադրանքների կատարումը ստուգելը. լավագույն ֆինանսկախի ստաներին փորձի փոխանակումը:

Ֆինսեկցիայի և Ֆիննակտիլի կազմի մեջ հոսունություն թույլ չտանլը, մամուլի միջոցով լավագույն Ֆիննակտիլիստաներին խրախուսելը, նրանց պատվոտախտակին բարձրացնելը և այլն:

6. Յուրաքանչյուր կուլտետեսուլթյան մեջ պատուամալորական խմբին կից՝ միջոցների մոբիլիզացիայի պլանի կատարման աջակցող ֆինիսումբ կամ ֆիննակադմակերպիչ առանձնացնելը: Ֆիննակազմակերպիչների աշխատանքների վրա ամենորյա հսկողություն սահմանելը, ֆինսեկցիայում նրանց ղեկուցումները լսելը:

7. Ֆինսեկցիայի աշխատանքներին գյուղի պրոֆիլիոքյան կոմիտեիտական և այլ կազմակերպություններին մասնակից անելը: Ֆինսեկցիայի հաշվետվություններն իր կատարած աշխատանքի մասին կուլտետեսակաանների և աշխատավոր մենատետեսների ընդհանուր ժողովներում վոչ ուշ քան յերեք ամիսը մեկ անգամ:

### 3. ԳՅՈՒՂԻՈՐՀՐԴԻ ՎԵՐՍՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

1. Գյուղխորհրդի ֆինանսական աշխատանքի վերստուգումը վոչ պակաս քան յեռամսյակում մեկ անգամ: Մանրադննին ստուգում պարզելու համար թե վորքան ճիշտ են դրամական միջոցների մուտքը և ծախս դրված: Հաշվի առնված և պահպանված արժեքավոր թղթերը, բլանկներն ու անդորրագրերը: Վո՞րքան ճիշտ և տարվում բյուջեյի, դյուզհարկի, կնքահարկման, կամ կոպարային ապահովագրության անձնական հաշիվներին վերաբերող հաշվետվու-

թյունը, վճարումների թվարկումը, փոխառության հաշվարկային տեղեկագրերը: Վո՞րքան ճիշտ են վճարողներին տրված անդորրագրերը, ժամանակին են բաժանորդագրներին բաժանվում վճարված պարտատուներ և դրամահավաքի ստուգումը: Վո՞րքան ճիշտ և ժամանակին են հանձնված յեղել դրամական գումարները Պետրանկին կամ խնայդրամարկղներին: Վերդրված դուլքի հաշվառումը, պահպանումն ու իրացումը:

2. Գյուղխորհրդի ֆինանսական աշխատանքի նյութերում ամսեկան վերստուգումներ կատարելը: Իրամի ճիշտ ընդունման, հավաքած պետական և տեղական բյուջեների միջոցները, Պետրանկի դրամարկղի կամ խնայդրամարկղներին ժամանակին և լրիվ հանձնելու ստուգումը, անդորրագրերի հաշվառման և պահպանման ճշտության ստուգումը, դրամահավաքների ստուգումը, անմիջաբար վճարողների մոտ (տնտեսություններում) անդորրագրեր տալու ճշտության ստուգումը:

3. Վերստուգիչ հանձնաժողովի կազմի աշխատունակությունը: Վերստուգիչ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի ակտիվ աշխատանքը, վերստուգիչ հանձնաժողովի անաշխատունակ անդամներին, սահմանված կարգով, լավագույն հարվածային կուլտետեսակաաններով և կուլտետեսուհիներով փոխարինելը:

4. Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքներին կուլտետեսականներին և աշխատավար մենատետեսներին մասնակից անելը. և վերստուգման նյութերը մատուցելու լուսաբանելը: Գյուղխորհրդի ֆինանսական և դյուզատետեսական սեկցիաների անդամներին, կոմյերիտականներին վերստուգմանը մասնակից անելը, նրանց առանձին ինքնուրույն առաջադրանքներ տա-

յու միջոցով: Դպրոցների, հիվանդանոցների և այլ հիմնարկութիւնների կատարած ծախսերի ստուգելը, գյուղական դրամահաւաքների աշխատանքի ստուգման վերաբերյալ և այլն վերստուգման արդյունքների մասին գյուղխորհրդի ընդլայնած նիստերում վողջ գյուղական ակտիվի մասնակցութեամբ ղեկուցումներ տալը: Վերստուգման արդյունքները պատի մամուլում, քաղաքային և շրջանային թերթերում լուսարանելը, հաշվետու ղեկուցումներ տալը ընտրողներին:

5. Հանձնաժողովների աշխատանքների վերաբերյալ շրջփինբաժնի և նրա հրահանգիչների տված ցուցումները ժամանակին կատարելը:

6. Շրջփինբաժնի և վերստուգիչ հանձնաժողովի կատարած վերստուգման առթիվ գյուղխորհրդին տրված ցուցումները ժամանակին կատարելու հանգամանք նույն հանձնաժողովի կողմից սխտեմատիկորեն ստուգելը:

7. Վերստուգիչ հանձնաժողովի ղեկուցումները շրջործկոմում վերստուգման արդյունքների մասին վոչ ուշ քան յեռամսյակում մեկ անգամ: Վերստուգիչ հանձնաժողովի կողմից գյուղխորհրդում հայտնաբերված բոլոր անկարգութիւնների և զեղծարարութիւնների մասին անմիջապէս շրջործկոմին և շրջփինբաժնիներին տեղեկացնելը (ցույց տալով կոնկրետ մեղաւորներին):

Հայտնաբերված բոլոր վատնումների, հափշտակումների, միջոցների և գույքի աղորինի ծախսման դեպքերի վերաբերյալ գործերն անմիջապէս պետք և հանձնել վերադաս մարմինների և դատական մարմինների քննութեանն և աշխատել, վորպեսզի վատնիչները աշխատանքից հանվեն ու պատժվեն:

## ՎՈՐՈՇՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԿՈՒՐՄ-ՄՐՑՈՒ-  
ՄԸ ՂԵԿԱՎԱՐՈՂ ԽՍՀՄ-Ի ՖԻՆԺՈՂԿՈՄՍԻՆ ԿԻՑ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՅԵՎ «ԵԿՈՆՈՄԻՉԵՍԿԱՅԱ ԺԻՁՆ»  
ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Հիմնել «Եկոնոմիչեսկայա Ժիզն» թերթում համախուլթենական Ֆինանսական կարմիր տախտակ Ֆինանսական աշխատանքով գյուղխորհրդների, լավագույն Ֆինանկցիայի և վերստուգիչ հանձնաժողովի կոնկուրս-մրցմանը մասնակցողներից առաջավորներին պարգևատրելու համար:

2. Համախուլթենական Ֆինանսական կարմիր տախտակի բարձրացվում են՝ այն գյուղական խորհուրդները, և նրանց Ֆինանսական սեկցիաները, վերստուգիչ հանձնաժողովները, շրջանային պատի թերթերը և առանձին Ֆինանսական ակտիվիստները ու Ֆինանսական աշխատողները, վորոնք պայքարի բողջեիկյան նմուշներ են տվել Ֆինանսական պլանի կատարման, գյուղխորհուրդների Ֆինանսական աշխատանքի վորակի բարձրացման բնադավառում և առանձին նախաձեռնութիւն են ցուցաբերել համախուլթենական կոնկուրս-մրցում անցկացնելու ժամանակ:

3. Համախուլթենական Ֆինանսական կարմիր տախտակի կարելի յե բարձրացնել հանձնաժողովի և

«Եկոնումիչեսկայա Ժիզն»-ի խմբագրութեան վորոշմամբ միայն: Թեկնածուներ կարմիր տախտակի բարձրացնելու համար առաջագրում են հանրապետական, յերկրային և մարդային Ֆինմարմինները գործկոմներին կից կոնկուրսային հանձնաժողովների համաձայնութեամբ:

Հանձնաժողովի նախագահ՝

ԽՍՀՄ-ի Ֆինմոդկոմի տեղակալ՝ Ո. Լիվին

«Եկոնումիչեսկայա Ժիզն»-ի պատ.

խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԿՈՎՍ

1934 թ. հունիսի 4.

№ 353

Հաստատում եմ

Խ.Ս.Հ.Մ. Կենտգործկոմին կից Կենտրոնական կոնկուրս անցկացնող հանձնաժողովի նախագահի տեղակալ

Ս. ՄԵՂԱԿՅԱՆ

25 հունիսի 1934 թ.

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂ-ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՉԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՆԿՈՒՐՍ-ՄՐՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

Ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհուրդների, լավագույն ֆինանսական սեկցիաների, լավագույն վերստուգիչ հանձնաժողովների համաժողովենական կոնկուրս-մրցման այն մասնակցողներին, վորոնք ցուցաբերել են ֆինանսական պլանի և գյուղխորհուրդների ֆինանսական աշխատանքի վորակի բարձրացման համար բույլեիկյան պայքարի նմուշներ, կատարել են ցուցանիշներ և հայտնաբերել են հատուկ նախաձեռնություն, ակտիվություն համաժողովենական կոնկուրս-մրցման կազմակերպման ու կիրառման ընթացքում պարզևատրելու նպատակով սահմանվում են հետևյալ պրեմիաները՝

1. ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՖԻՆԺՈՂԿՈՄՍԻ ՄԻԱՑՅԱԼ ՖՈՆԴԻՑ.

Գյուղխորհուրդների համար.

Առաջին պարգևատրում 10.000 ռուբլի— 6 պրեմիա  
Յերկրորդ » 5.000 ռուբլի— 25 »

Գյուղխորհուրդների նախագահների համար

Առաջին պարզեատրում	600 ուրբլի	10 պրեմիա
Յերկրորդ »	500 ուրբլի	30 »
Յերրորդ »	400 ուրբլի	75 »

Պարզեատրում են այն գյուղխորհուրդները և գյուղխորհրդների նախագահները, վորոնք ֆինանսական աշխատանքների ցուցանիշների հետ միաժամանակ կունենան նաև հիմնական գյուղատնտեսական կամ պանիսների անցկացման լավ ցուցանիշներ :

2. ԽՍՀՄ ՖԻՆԺՈՂԿՈՄՍՏԻ ՖՈՆԴԻՅ .

Գյուղխորհուրդների քարտուղարների համար .

Առաջին պարզեատրում	400 ուրբլի	15 պրեմիա
Յերկրորդ »	300 ուրբլի	60 »
Յերրորդ »	200 ուրբլի	75 »

Գյուղխորհուրդների հաշվետարների համար .

Առաջին պարզեատրում	400 ուրբլի	15 պրեմիա
Յերկրորդ »	300 ուրբլի	60 »
Յերրորդ »	200 ուրբլի	75 »

Ֆինանսկցիայի նախագահների և ֆինանսկցիաների անդամների համար .

Առաջին պարզեատրում	400 ուրբլի	15 պրեմիա
Յերկրորդ »	300 ուրբլի	60 »
Յերրորդ »	200 ուրբլի	75 »

Վերստուգիչ հանձնաժողովների նախագահների և անդամների համար .

Առաջին պարզեատրում	400 ուրբլի	15 պրեմիա
Յերկրորդ »	300 ուրբլի	60 »
Յերրորդ »	200 ուրբլի	75 »

Գյուղական հարկային հանձնաժողովների, Պետայի հանձնաժողովների, փոխառության և պետվարկին ու ժանդակող հանձնաժողովների նախագահների և անդամ-հարվածային ֆինակտիվիստների համար .

Առաջին պարզեատրում	300 ուրբլի	25 պրեմիա
Յերկրորդ »	250 ուրբլի	75 »
Յերրորդ »	200 ուրբլի	100 »

Առանձին ֆինանսական աշխատակիցների համար .

Առաջին պարզ .	3 ամսվա աշխատավարձ	15 պրեմիա
Յերկրորդ »	2 ամսվա »	60 »
Յերրորդ »	1 ամսվա »	75 »

Պարզեատրվածներին տրվում է նաև համապատասխան պատվորագիր :

Գյուղխորհուրդներին նախագահներին և այլ անձանց պարզեատրումը կատարելու յե ԽՍՀՄ Կենտրոնականի նախագահության կից կենտրոնական կոնկուրս-հանձնաժողովը հանրապետական կենտրոնական կոնկուրս-հանձնաժողովը հանրապետական կենտրոնական կոնկուրս-հանձնաժողովը հանրապետական կենտրոնական կոնկուրս-հանձնաժողովը հանրապետական կենտրոնական կոնկուրս-հանձնաժողովը :

ԽՍՀՄ Ֆինժողկոմի տեղակալ՝ Լեվին

ՎՈՐՈՇՈՒՄ

ԱՍՖԻ-Ի ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

1934 թ. հունիսի 27-ին.

Ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհուրդներին, ֆինսեկցիաներին և վերստուգիչ հանձնաժողովներին պարզեցնելու նպատակով ֆոնդ սահմանելու մասին:

ԱՍՖԻՆՀ-ի Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը վարոշում է՝

Ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհուրդներին, գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովներին և ֆինսեկցիաներին պարզեցնելու նպատակով առանձնացնել 25.000 ռ. և հանձնել այդ գումարը ԱՍՖԻՆՀ-ի Ֆինսեկցիոնային կից կոնկուրսային հանձնաժողովին: Առաջարկել ԱՍՖԻՆՀ-ի կազմի մեջ մտնող հանրապետութունների ֆինսեկցիոնային նույնպես առանձնացնել անհրաժեշտ գումարներ ֆինաշխատանքներով լավագույն գյուղխորհուրդներին, ֆինսեկցիաներին և վերստուգիչ հանձնաժողովներին պարզեցնելու համար:

Հանձնարարել կոնկուրսային հանձնաժողովին մրշակել պարզեցնելու կարգը և պայմանները ԽՍՀՄ-ի Ֆինսեկցիոնային ցուցումների համաձայն:

ԱՍՖԻՆՀ-ի ֆինանսների ժողովրդական կոմիսար՝ Վ. ՅԵՐԵՄՅԱՆ



ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ-Ի ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

1934 թ. հունիսի 1-ին.


Ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհուրդներին, գյուղխորհուրդների ֆինանսական սեկցիաներին, վերստուգիչ հանձնաժողովներին և ֆինամարմինների առանձին աշխատակիցներին պարզեցնելու նպատակով հատուկ ֆոնդ սահմանելու մասին:

ՀՍԽՀ-ի Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը վարոշում է՝

Ֆինանսական աշխատանքով լավագույն գյուղխորհուրդներին, գյուղխորհուրդների ֆինանսական սեկցիաներին, վերստուգիչ հանձնաժողովներին և գյուղխորհուրդների, ֆինսեկցիաների և վերստուգիչ հանձնաժողովների ԽՍՀՄ-ի կենտրոնական 1934 թ. ապրիլի 7-ի և մայիսի 17-ի վերոշումներով հայտարարած կոնկուրս-մրցութային մեջ լավագույն աշխատանքի նմուշներ հայտնաբերող ֆինամարմիններին առանձին աշխատակիցներին պարզեցնելու նպատակով, սահմանել հատուկ ֆոնդ 10.000 ռ. գումարով:

Առանձնացրած այդ գումարը հանձնել ֆինսեկցիոնային կից կազմակերպված կոնկուրսային հանձնաժողովին:

Պարզեցնելու կատարել աշխատանքի այն ցուցանիշների առկայությունը դեպքում, վերոնշյալ հաստատված են ԽՍՀՄ-ի Ֆինսեկցիոնային կոմիտեի 1934 թ. հունիսի 10-ին, ԽՍՀՄ-ի կենտրոնական կենտրոնական կոնկուրսային հանձնաժողովի համաձայնությամբ:



39. 725

8

352  
L-24